ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՅՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ քաղաքացիության դադարեցման հայտ ներկայացնելու համար ՀՀ քաղաքացին պետք է գրանցվի ՔԳԷԿ համակարգում՝ խիստ նույնականացմանմբ և իր անձնական էջից ներկայացնի հայտ:



Քայլերի հերթականություն

Քայլ 1 – Ծառայության տեսակի ընտրություն 2

Քայլ 2 – Հիմքի ընտրություն 2

Քայլ 3 – Անձնագրային տվյալներ և Ծննդյան վկայական 2

Քայլ 5 – Լուսանկար 3

Քայլ 6 – Ընդհանուր տվյալներ 3

Հիմքը՝ ՈՒնեմ այլ երկրի քաղաքացիություն 3

Հիմքը՝ Չունեմ այլ պետության քաղաքացիություն, սակայն ունեմ քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորություն 3

Հիմքը՝ Չունեմ այլ պետության քաղաքացիություն, սակայն քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստումը կներկայացնեմ եռամսյա ժամկետում 4

ԱՄՓՈՓՈՒՄ 5

ՎՃԱՐՈՒՄ 6

ՇՏԿՈՒՄ 6

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ..... **Ошибка! Закладка не определена.**

Քայլ 1 – Ծառայության տեսակի ընտրություն

Առաջին քայլով ընտեք ծառայության տեսակը՝ Քաղաքացիությունը դադարեցնելու հայտ և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Քայլ 2 – Հիմքի ընտրություն

Այս քայլով անհրաժեշտ է ընտրել այն տարբերակը, որի համար հաջորդ քայլերով կներկայացնեք հիմնավորող փաստաթղթեր:

ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար կարող եք ներկայացնել հայտ, եթե.

1. Ունեք այլ պետության քաղաքացիություն
2. Չունեք այլ պետության քաղաքացիություն, սակայն ունեք քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորություն,
3. Չունեք այլ պետության քաղաքացիություն, սակայն այն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստումը կներկայացնեք եռամսյա ժամկետում:

Ընտրեք Ձեր համապատասխան տարբերակը և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Հաջորդող քայլերում ցանկացած պահի կկարողանաք չեղարկել կամ պահպանել Ձեր առաջընթացը և հետագայում շարունակել գործընթացը:



Քայլ 3 – Անձնագրային տվյալներ

- ✓ Ձեր անձնագրային տվյալները ինքնաշխատ եղանակով կարտացոլվեն այս էջում:
- ✓ եթե ունեք տվյալի փոփոխություն (ծննդյան վկայականում և անձնագրում առկա են տվյալների անհամապատասխանություն), ապա սեղմեք համապատասխան ընտրավանդակի վրա և ավելացրեք տվյալի փոփոխության փաստաթուղթը (օրինակ՝ ամուսնության վկայական, իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ և այլն)



Սեղմեք «Հաջորդ» կոճակը՝ հաջորդ քայլին անցնելու համար:

Քայլ 5 – Լուսանկար

Վերբեռնեք Ձեր՝ ուղեցույցին համապատասխանող լուսանկարը և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Քայլ 6 – Ընդհանուր տվյալներ

Ստուգեք անձնական տվյալների համապատասխանությունը: Այստեղ կարող եք ավելացնել հավելյալ բնակության հասցե, հեռախոսահամար:

Այսքանով ավարտվում է անձնական տվյալների բաժինը: Հաջորդ քայլերով կներկայացնեք ընտրված հիմքը հիմնավորող փաստաթղթերը:

Հիմքը՝ ՈՒնեմ այլ երկրի քաղաքացիություն

Այս հիմքը ընտրելու դեպքում անհրաժեշտ է.

- ✓ Ձեր օտարերկրյա անձնագրի լուսապատճեն
- ✓ Բացվող ցանկից ընտրել քաղաքացիության երկրը
- ✓ Կցել անձնագրի հայերեն թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ,

- ✓ Եթե արական սեռի ներկայացուցիչ եք և Ձեր տարիքը չի գերազանցում 55 տարեկանը,ապա անհրաժեշտ է ներկայացնել զինվորական գրքույկի լուսապատճեն:

Հիմքը՝ Չունեմ այլ պետության քաղաքացիություն, սակայն ունեմ քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորություն

Այս հիմքը ընտրելու դեպքում անհրաժեշտ է.

- ✓ Օտարերկրյա իրավասու մարմնի կողմից տրված տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստման լուսապատճեն,
- ✓ Կցել ներկայացված փաստաթղթի հայերեն թարգմանությունը՝ հաստատված ապոստիով կամ հյուպատոսական վավերացմամբ,
- ✓ Եթե արական սեռի ներկայացուցիչ եք և Ձեր տարիքը չի գերազանցում 55 տարեկանը,ապա անհրաժեշտ է ներկայացնել զինվորական գրքույկի լուսապատճեն:

Այս հիմքով դիմելու դեպքում ՀՀ Նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագրի ստորագրելուց հետո անհրաժեշտ է ներկայացնել ստացված քաղաքացիության անձնագիրը:

Այն կարող եք ներկայացնել նաև դիմումի վարման ցանկացած փուլում:



Հիմքը՝ Չունեմ այլ պետության քաղաքացիություն, սակայն քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստումը կներկայացնեմ եռամսյա ժամկետում

Այս հիմքը ընտրելու դեպքում տվյալ փուլում անհրաժեշտ է ներկայացնել միայն զինվորական գրքույկի լուսապատճեն, եթե արական սեռի ներկայացուցիչ եք և եթե Ձեր տարիքը չի գերազանցում 55 տարեկանը:

Այցելության ժամանակ բնօրինակ փաստաթղթերը ներկայացնելուց և գործը վարույթ ընդունելուց հետո եռամսյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել նաև օտարերկրյա իրավասու մարմնի կողմից տրված՝ տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստման լուսապատճեն, այլապես հայտը կմերժվի: Քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստման փաստաթղթի փոխարեն կարող եք ներկայացնել նաև օտարերկրյա պետության քաղաքացիության անձնագիրը:



Նշված ժամկետում քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին հավաստումը ներկայացնելուց և ՀՀ Նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հրամանագրի ստորագրելուց հետո անհրաժեշտ է ներկայացնել նաև ստացված քաղաքացիության անձնագիրը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս բաժնում կարող եք տեսնել Ձեր բոլոր գործողությունները՝ ամփոփված, կարող եք համապատասխան բաժնից անցնել նախընտրած էջ և խմբագրել ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը:

Մինչև 01.01.2026թ.-ը նախագործարկված համակարգում «ՈՒղարկել հայտը» կոճակը սեղմելուց հետո հնարավոր կլինի ամրագրել այցելության օր:

Ընտրված օրը անհրաժեշտ է ներկայանալ բոլոր ներկայացված փաստաթղթերի բնօրինակներով և անձը հաստատող փաստաթղթով՝ նախընտրված ժամից 10 րոպե առաջ:

ՎՃԱՐՈՒՄ

Հայտ դիտարկման ներկայացնելու համար անհրաժեշտ է կատարել պետական տուրքի վճարում:

Վճարումը կարող եք իրականացնել առցանց՝



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Մինչև 01.01.2026թ.-ը համակարգով ներկայացված հայտերի համար

պետական տուրքի վճարումը անհրաժեշտ է կատարել ընտրված օրվանից առնվազն 10 օր առաջ,

բայց ոչ շուտ քան 01.01.2026թ.

ՇՏԿՈՒՄ



Եթե հայտում բացակայում են անհրաժեշտ թարգմանությունները կամ ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում ընտրված հիմքին, ապա տեսուչը կարող է հայտը ուղարկել շտկման:

Դուք կստանաք ծանուցում և՛ էլեկտրոնային փոստով և՛ հարթակի միջոցով:

Անհրաժեշտ է սեղմել «Շտկել» կոճակը և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Եթե 15 աշխատանքային օրվա ընթացքում չկատարեք շտկումը, հայտը կչեղարկվի: